ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

28 օգոստոսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարդարյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրապյանը, Արմենուհի Ոսկանյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Թիանա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Գրիգոր Կարապետյանը, Պավլիկ Պապինյանը և Էմմա Գասպարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սևակ Խաչատրյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 11 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 15:10-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 8-րդ հարց և որոշման նախագիծ հետևյալ բովանդակությամբ.

8. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 11 ձայների համաձայնությամբ որոշման նախագիծն ընդգրկվեց օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:

Քվեարկությամբ, կողմ՝ 11 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 92-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.
Հաստատված օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի օգոստոսի 28-ի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Փամբակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ընտրված առաջարկների իրականացմանը հավանություն տալու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը (գոտեվորման մասով) հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում «Դեբետ բնակավայրի խմելու ջրագծի գոյություն ունեցող ջրատարի և ջրընդունիչի վերականգնում» ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից համաֆինանսավորում կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

7. Եվրոպական միության կողմից իրականացվող «STRIVE» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ Վահագնիի տեխնոպարկի համալրում համատեղ գործողությունների ծրագիր-առաջարկի հայտին և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ընտրված առաջարկների իրականացմանը հավանություն տալու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ բնակիչների կողմից ներկայացվել և քվեարկության արդյունքում ընտրվել է 2 առաջարկ.

1. Գյուղատնտեսության զարգացման նպատակով գութանի ձեռք բերում
2. Ճանապարհների սանիտարական մաքրման համար ավելի /սանր/ ձեռք բերում

Առաջարկվում է տալ հավանություն մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ համայնքի բնակիչների կողմից ներկայացված և քվեարկության արդյունքում ընտրված առաջարկներին:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 093-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով օրենսդրությունը և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.03.2024թ. թիվ 20 դրական եզրակացությունը, առաջարկում է տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 7,16012 հա (06-107-0501-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված) և 0,13715 հա (կադաստրային ծածկագիր' 06-107-0504-0002) արոտավայրերը, 5,96766 հա (06-108-0105-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 0,07084 հա (06-108-0123-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 4,51994 հա, 42,12175 հա (06-108-0124-0002 կադաստրային ծածկագրից առանձնացված), 6,54862 հա (06-108-0124-0003 կադաստրային ծածկագրից առանձնացված), 0,02794 հա, 0,13565 հա (06-108-0509-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 2,82259 հա (06-108-0510-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 0,04065 հա (06-108-0524-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 0,41587 հա (06-108-0577-0003 կադաստրային ծածկագրից առանձնացված) այլ հողատեսքերը և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0,28463 հա (06-107-0864-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված) այլ հողատեսքը (դաշտամիջյան ճանապարհ) հատուկ նշանակության հողերի նպատակային նշանակության փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 094-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Հաղամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով օրենսդրությունը և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 17.07.2024թ. թիվ 37 դրական եզրակացությունը, առաջարկում է տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0,076345 հա արոտավայրը (կադաստրային ծածկագիր՝ 06-023-0201-0001-ից) բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելուն և ուղղակի վաճառքով Վիգեն Վաղարշակի Պետրոսյանին և Ալվարդ Վաղենակի Պետրոսյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին է սահմանվում կադաստրային արժեքի չափով՝ 393025 (երեք հարյուր իննսուներեք հազար քսանհինգ) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 095-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը (գոտեվորման մասով) հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունը և ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N2-17 դրական եզրակացությունը, անհրաժեշտ է հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքը (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-9 համակցված տարածական պլանավորման նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 096-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում «Դեբետ բնակավայրի խմելու ջրագծի գոյություն ունեցող ջրատարի և ջրընդունիչի վերականգնում» ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից համաֆինանսավորում կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է տալ համաձայնություն «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Դեբետ բնակավայրի խմելու ջրագծի գոյություն ունեցող ջրատարի և ջրընդունիչների վերականգնման» աշխատանքների համար Փամբակ համայնքի 2024թ. բյուջեից 7980000 ՀՀ դրամ համաֆինանսավորում կատարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 097-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Եվրոպական միության կողմից իրականացվող «STRIVE» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ Վահագնիի տեխնոպարկի համալրում համատեղ գործողությունների ծրագիր-առաջարկի հայտին և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է տալ համաձայնություն Փամբակ համայնքի մասնակցությանը Եվրոպական միության կողմից իրականավող «STRIVE» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ «Վահագնիի տեխնոպարկի համալրում» համատեղ գործողությունների ծրագիր-առաջարկին:
Ինչպես նաև տալ համաձայնություն համատեղ գործողությունների ծրագիր-առաջարկի հայտի հաստատման դեպքում Փամբակ համայնքի 2024թ. բյուջեից ծրագրի ընդհանուր արժեքի մինչև 30%-ի չափով համաներդրում կատարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 098-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրամն բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024թ-ի բյուջեում նախատեսվում է իրականավնել հետևյալ փոփոխությունները.

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ընտրված առաջարկների իրականացման նպատակով բյուջեի պահուստային ֆոնդում նախատեսված 2 մլն. դրամից 1 մլն. դրամը տեղափոխել 04.02.01՝ գյուղատնտեսության նախահաշիվ՝ գութանի գնման համար, իսկ 1 մլն. դրամը տեղափոխել 04.05.01՝ ճանապարհային տրանսպորտի 5121 հոդված՝ սանիտարական մաքրման նպատակով ավելի ձեռք բերման համար:
2. 06.04.01՝ փաղոցային լուսավորության նախահաշվից պակասեցնել 6 մլն. դրամ, որից 5 մլն. դրամը տեղափոխել 04.05.01՝ ճանապարհային տրանսպորտի 5121 հոդված՝ տեխնիկայի ձեռք բերման համար, իսկ 1 մլն. դրամը տեղափոխել 04.02.01՝ գյուղատնտեսության նախահաշիվ՝ գյուղ. տեխնիկա գնելու համար:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 099-Ն/:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ